

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Եղի՛ր այնքան ուժեղ,  
որ թշնամիդ չհանդգնի  
հարձակվելու...

Գարեգին Նժդեհ



Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ հայ-ադրբեջանական շփման զծի անմիջական հարևանությամբ

## Ավետիք Խահակյանը՝ 104 տարի առաջ՝ մարտի 23-26-ը, Շուշիում՝ անգլիացիների քաջալերանքով, ադրբեջանցիների կազմակերպած հայերի կոտորածի մասին

1920 թ. մարտի 23-26-ը Շուշիում տեղի ունեցավ հայերի կոտորած...

Փ ախչում են հրդեհից, ջարդից՝ թուրք և ադրբեջանցի ժողովրդի ու նրանց պետերի ձեռքով կատարված: Իթթիհատ-Մուստաֆա Քեմալի, Նուրի փաշայի և Խոսրով Սուլթանովի արյունոտ գործը՝ անգլիացիների հավանությամբ:

Շուշուց մոտ 6000 մարդ և գավառից 40 հայ գյուղ բանդած, մասամբ կոտորած:

Ականատես Միրզա Տեր-Սարգսյանի (Միրտար) հիշատակարանից արտագրած:

«Մեր առաջ, մեր ոտների տակ մեզ հանդիպում են ընկած դիակներ, կիսամեռ մարդիկ, արյան մեջ թավալվողներ. ընկնում էին շատերը մեր կողքին, մեր ձեռքերի վրա, մեր ոտների տակ, մեռած, վիրավոր, հառաչանքները բերաններին մի կում ջուր հայցելով, մի փրկություն աղերսելով... Մայրն ընկնում է աղջկա կողքին, աղջիկը կռանում է, որ բարձրացնի, հանկարծ այն կողմից վրա է հասնում ասկարը, վիրավոր մորը սվինով տապալում գետնին և աղջկան թևի տակն առած՝ թուրք սպային ընծա տանում: Գեղեցկուհի մոր գրկին մանուկը վիրավորվում է, մայրը հանում է թաշկինակը, որ վերքը կապի, սպան մոտենում է, մանկանը մոր գրկից առնում դեն շարտում իբրև մի ավելորդ և իրեն խանգարող բեռի, և օրհասական կռվով, ճկոցով ու իր երեսը ծվատող մորը ներքև բարջ տալիս:

Ո՛վ էր նայուրը: Թեկուզ բարեկամ, թեկուզ հարազատ ու աչքի ազիզ, ամեն մարդ իր գլուխն էր ազատում, ամեն մարդ իրեն փախցնում: Մայրն իր որդուն էր կորցնում, կինը՝ հիվանդ ամուսնուն, որդին՝ պառավ մորը, քույրը՝ եղբորը: Եվ վազում էին անզգա, վայրենաբար, մեկը մյուսին կորցրած... Իսկ ավելի սարսափեղին. սպանված կնոջ ամուսինը ծծկեր մանկան վայր է դնում մի թփի տակ և ինքը մեկնում... հայրը վիրավոր որդուն մի քիչ տեղ բերելով՝ հոգնում է ու թողնում ճանապարհի կեսին, հոգեվարքի մեջ, որ ինքը կարողանա ազատ փախչել... վիրավոր մոր կրծքի վրա ընկած մանուկը մոր ծիծն է... Իսկ մայրն անզգա, վերջին շնչում: Մի 12 տարեկան տղա պատմում է, որ իրենց տան հինգ հոգուն իր աչքի առջև մորթեցին և ինքը միայն պահարանի տակ թաքնվելով՝ ազատվել է...»:

Շուշին այրելուց, 6000 հայ չարաչար սպանելուց մի բանի ամիս հետո Միրզան գնում է Շուշի, իր տան ավերակները տեսնելու և թաքստոցից պահած արծաթեղեղը հանելու: Գալիս տեսնում է, որ թուրքերն արդեն պեղել-հանել են թաքստոցը: Հետո, նույնիսկ սովետացած Շուշի՝ նրա իշխանավոր ադրբեջանցի յուրաշնոր թույլ չեն տալիս վերադառնալ հայերին՝ պեղումներ անելու իրենց այրված տներում հրամայելով, թե դրանք «պատերազմական գույք են, ավար են...»:

Միրզան նկարագրում է ավերված քաղաքը. մի երկու զգացված տեղեր արտագրեմ.

## Ադրբեջանը ստեղծում է Հայաստանի Նկատմամբ ռազմական ագրեսիայի ու հայերին ապօրինի ազատագրվելու արհեստական հիմքեր

«Թաթոյան» հիմնադրամը հայտնում է. «Այն բանից հետո, երբ Հայաստանում բարձրագույն մակարդակով սկսեցին հայտարարել Ոսկեպարի, Բաղանիսի և մյուս գյուղերի մասին, Ադրբեջանն էլ անմիջապես հայտարարեց հայերի նկատմամբ հարուցված կեղծ քրեական գործի մասին՝ «ադրբեջանցիներին ցեղասպանության և տեղահանման ենթարկելու» հոդվածներով:

Այդ կերպ Ադրբեջանը ստեղծում է Հայաստանի նկատմամբ ռազմական ագրեսիայի ու հայերին ապօրինի ազատագրվելու արհեստական հիմքեր՝ հարուցելով կեղծ քրեական գործեր: Մասնավորապես, Ադրբեջանի զինվո-

րական դատախազությունը հայտարարություն է տարածել այն մասին, թե իբր 1990թ. մարտի 24-ին հայերն ադրբեջանցի բնակիչների վրա կրակ են բացել, որի հետևանքով սպանվել են և գյուղից տեղահանվել են ադրբեջանցիներ:

Ըստ ադրբեջանական դատախազության՝ «Բաղանիսի և Այրումի ցեղասպանության» մեղադրանքով 18 հայի նկատմամբ կեղծ քրեական գործը հարուցվել է 2005 թ. մայիսի 5-ին՝ Ադրբեջանի քրեական օրենսգրքի 103-րդ (Ցեղասպանություն) և 107-րդ (Բնակչությանը բռնի տեղահանում) հոդվածներով:

Ըստ այդ հայտարարության՝ իբր «Ղազախի շրջանի 7 գյուղ շարունակում է մնալ Հայաս-

տանի օկուպացիայի ներքո, որը [Հայաստանը] պետական մակարդակով իրականացնում է ահաբեկչություն»:

Այս ամենը ցույց է տալիս, որ նշված գիշու-մը լի է նոր աղետաբեր հետևանքներով, այդ թվում՝ Հայաստանի քաղաքացիների ապօրինի ձեռքարկություններով, առևանգումներով, գերեվարումներով:

Ադրբեջանի իշխանությունն իր բոլոր հայտարարություններով ու գործողություններով ցույց է տալիս, որ խաղաղության որևէ նպատակ չունի, ընդհակառակը՝ գործում է Հայաստանի ու հայության ուղղված առավել ընդգծված ագրեսիվ քայլերով ու սպառնալիքներով»:

## Ամենայն հայոց կաթողիկոսի ցավակցագիրը ՌԴ Նախագահին և Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարքին

Մարտի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն հայոց կաթողիկոսը ցավակցագրեր է հղել Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինին և Մոսկվայի ու Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին՝ Մերձ-մոսկվայի Կրասնոդարսկ քաղաքի «Կրոկուս Միթի Յոլ» համերգասրահում տեղի ունեցած ահաբեկչության կապակցությամբ:

Խստորեն դատապարտելով անմարդկային

ոճրագործությունը՝ Ամենայն հայոց կաթողիկոսը Գերագույն հոգևոր խորհրդի, հոգևոր դասի և հավատավոր հայ ժողովրդի անունից խորին վշտակցություն է հայտնել ՌԴ Նախագահին, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հովվապետին և Ռուսաստանի ողջ ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը հայցել է, որ Ամենողորմ Աստված երկնային օթևաններում հանգեցնի զոհված քաղաքացիների հոգիները, Սուրբ Հոգով մխիթարի բոլոր սգավորնե-



րին և շուտափույթ ապաքինում պարգևի բոլոր տուժածներին:

ՄԱՅՐ ԱՐԹՈՒՍ ՏԵՐԵՎԱՏՎԱԿԱԼ  
ՀԱՄԱԿԱՐԳ, 23 ՄԱՐՏԻ 2024 Թ.

# Արցախի գերեզմարված ռազմաքաղաքական ղեկավարները պետք է ազատ արձակվեն

Անթիլիասի Մայրավանքում տեղի է ունեցել Ազգային կեդրոնական վարչության թեմակալ առաջնորդների և ներկայացուցիչների հանդիպումները: Հայտնում են կաթողիկոսության մամուլի ծառայությունից:



Լախագահությամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, 12 Մարտին 15 Մարտ 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մեջ յաջողությամբ տեղի ունեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներ և թեմակալ առաջնորդներու ու ազգային վարչութեանց ներկայացուցիչներու հանդիպումներ: Յիշեալ մարմինները Նախ առանձնաբար հանդիպումներ ունեցան և ապա՝ միացեալ, յատուկ օրակարգերու համաձայն: Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն ժողովին գեկուցում տրուեցաւ նաև Արցախի ժողովուրդի իրաւունքներու վերականգնման ուղղութեամբ Կաթողիկոսութեան տարած աշխատանքներուն մասին: Ինչպէս ծանօթ է ձեզի, «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»-ին ճամբով լծուած ենք լուրջ խորհրդակցութիւններու, քննարկումներու ու վերլուծումներու: Մեր գլխաւորութեամբ հետևողական աշխատանք կը տարուի ցեղասպանագետներու և միջազգային արդարադատութեան մարզին մէջ հեղինակութիւն եղող անձնաւորութիւններու հետ կապեր հաստատելու, միջազգային տարբեր կազմակերպութիւններու ու ատենակներու մօտ Արցախի առևանգուած ռազմաքաղաքական ղեկավարութեան ու ռազմագերիներու ազատ արձակման առաջարկանքի իրականացման ուղիները ճշդելու: Յառաջիկային պիտի յայտարարենք այս ուղղութեամբ առնուելիք շօշափելի քայլերու մասին:



# «Այունիք» օդանավակայանի ներուժն ամբողջությամբ կարող է բավարարել միջազգային չվերթներ իրականացնելուն

Հայաստանի ուղևորափոխադրումների ոլորտում աստիճանաբար ուրույն տեղ են գրավում Երևան-Կապան և հակառակ ուղղությամբ օդային չվերթները: «Այունիք» օդանավակայանում առայժմ վայրէջք է կատարում միայն երկրի սրտից ժամանող ինքնաթիռը, սակայն տեսանելի ապագայում այստեղից կարող են չվերթներ բացվել նաև այլ երկրներ: Այդ մասին հայտնեց օդանավակայանի տնօրեն Կարեն Վարդանյանը:

Լա տեղեկացրեց, որ Երևան-Կապան-Երևան չվերթի առաջին թռիչքը տեղի է ունեցել դեռ անցյալ տարվա ապրիլի 26-ին: Այն կրում էր տեխնիկական բնույթ: Իսկ օգոստոսի 21-ից սկսել են իրականացնել կոմերցիոն ուղևորափոխադրումներ, որոնք կատարվում են շաբաթական երկու անգամ երկուշաբթի և ուրբաթ օրերին: 7 ամսում կատարվել է 35 չվերթ: Երբեմն եղանակային պայմանները չեն նպաստում թռիչքների անվտանգ իրականացմանը, և այդ ժամանակ չվերթները չեղարկվում են: Սակայն նման իրավիճակներ պատահում են նաև աշխարհի խոշորագույն օդային հանգույցներում: Ուղևորների և ինքնաթիռի անվտանգության անվտանգությունն առաջնային է: Ըստ Կարեն Վարդանյանի՝ բնության բնահմուցներից կախվածությունը թուլացնելու,

«Այունիք» օդանավակայանի աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու և չեղարկումների քանակը կրճատելու նպատակով ՀՀ կառավարությունը կատարում է ներդրումներ, ձեռք բերում և տեղադրում համապատասխան սարքեր: Մասնավորապես, արդեն իսկ տեղադրվել է ամպի ստորին շերտի բարձրությունը չափող սարք: Առաջիկայում նախատեսվում է տեղադրել նաև VOR/DME սարքավորում, որն օդաչուներին հնարավորություն է ընձեռում ստանալ ավելի շատ տեղեկատվություն և էականորեն կրճատում է չվերթների չեղարկման հավանականությունը:

«Այունիք» օդանավակայանի բնականոն գործունեությունն ամբողջությամբ ապահովվում է «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի հատկացրած ֆինանսական միջոցներով: 2023 թվականին հիմնադրամն այդ նպատակի համար տրամադրել է ավելի քան 150 միլիոն դրամ: Այս պահին օդանավակայանն իր առջև դրված խնդիրները լուծելու համար նոր ներդրումների կարիք չունի:

Թռիչքուղու և այլ ենթակառուցվածքների կառուցման համար կոմբինատը ծախսել է 2.5 միլիարդ դրամ: Իսկ ընդհանուր առմամբ, «Այունիք» օդանավակայանի շինարարության, գույքի և ինքնաթիռի ձեռքբերման համար Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը տրամադրել է ավելի քան 10 միլիարդ դրամ:

Հայաստանի հարավային այս օդանավակայանն ի սկզբանե նախագծվել և կառուցվել է միջազգային չվերթներ սպասարկելու հնարավորությամբ և հեռանկարով: Օդանավակայանի տնօրեն Կարեն Վարդանյանը նշեց, որ կառույցի ներուժն ամբողջությամբ կարող է բավարարել միջազգային չվերթներ իրականացնելուն: Կան որոշ իրավական և տեխնիկական հարցեր, որոնք պետության կողմից կարգավորելու դեպքում սեղմ ժամկետներում հնարավոր կլինի միջազգային հանգույց դարձնել «Այունիք»-ը:

ՉՊՄԿ-ից «Արմենպրես»-ին հայտնեցին, որ «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը հոգում է նաև օդանավի պահպանման ծախսերը և փոխհատուցում չվերթն իրականացնող «Նովյեյր» ընկերության ծախսերը: 2023 թվականին այդ նպատակին հիմնադրամը տրամադրել է շուրջ 505 միլիոն դրամ:

ARMENPRESS.AM  
22.03.2024 Թ.

# Ընթացիկ բնապահպանական բարեփոխումներ ՉՊՄԿ-ում

Անցած շաբաթ նշվեց անտառների միջազգային օրը, ջրի համաշխարհային օրը ...

Վերահաստատելով բնապահպանական պատասխանատվության ՉՊՄԿ հանձնառությունը, ՉՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խոտրովին մասնավորապես ասել է. «ՉՊՄԿ-ն հրապարակայնորեն պարտավորվել է տրանսֆորմացվել ժամանակակից հանքարդյունաբերական ընկերության, որն աշխատում է ոլորտի առաջատար չափանիշներին համապատասխան: Այս շաբաթ, երբ աշխարհը նշում է բնապահպանական մի քանի կարևոր իրադարձություններ, մենք ցանկանում ենք վերահաստատել մեր այս հանձնառությունը: Հանքարդյունաբերությունը կարևոր դեր է խաղում էներգետիկ անցման և կանաչ տնտեսության համար նյութեր ապահովելու գործում: Որպես արդյունաբերական ճյուղ՝ մեր պարտականությունն է ապահովել տնտեսական վերափոխումը՝ բնապահպանական պատասխանատվության ամբողջական ինտեգրմամբ: Ոլորտի առաջատար ընկերություններն արդեն ապացուցում են, որ սա դժվար, բայց հնարավոր է այլընտրանք չունեցող ճանապարհ է, և ես հպարտ եմ, որ կարճ ժամանակահատվածում մեր ընկերությունն արդեն զգալի առաջընթաց է գրանցել այս ուղղությամբ»:



տնկվել և կուլտիվացման է ենթարկվել է 12.588 ծառ, 1350 թուփ, 4230 ծաղիկ, 140 կգ գազոնի սերմ: Այս տարի մեկնարկվել է անտառվերականգնման աննախադեպ գործընթացը, որն իրենից ներկայացնում է ընդհանուր առմամբ 20 հա անտառտնկում շուրջ 17 հա անտառային հողերում և 3 հա համայնքային նշանակության տարածքներում: Միայն Արծվանիկի պոչամբարում հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է 20 հեկտար ռեկուլտիվացիա՝ օգտագործվել է ավելի քան 10.700 ծառ:

Նոր գեոստրատեգիայի համակարգի տեղադրում. համակարգի տեղադրումը թույլ է տալիս ցանկացած տեկտոնական կամ վիբրացիոն շարժման դեպքում հասկանալ պոչամբարի զգայունությունը և դրա թույլատրելի շեղումների ցուցանիշները: Այս սարքավորումների շնորհիվ որևէ շարժման դեպքում ավտոմատ արձագանքման համակարգը գրանցելու է տվյալները, համեմատելու է թույլատրելի և ոչ թույլատրելի շեղումների ցուցանիշները և անմիջապես հաղորդելու է: Նախատեսվում է, որ առաջիկա 7-8 ամիսների ընթացքում համակարգը պատրաստ կլինի շահագործման:

Փոշու կառավարում. նոր ջրային թնդանոթների համակարգը տեղում նստեցնում է փոշին անմիջապես հորատման աշխատանքների ընթացքում: Բացահանվում արդեն տեղադրված է 4 թնդանոթ: Առաջիկայում կներկրվեն ջրի շիթային թնդանոթներ, ինչպես ստատիկ, այնպես էլ՝ շարժական համակարգերով: Ջրի շիթային թնդանոթներ կիրառվում են աշխարհի առաջատար հանքարդյունաբերական ծրագրերում և զգալիորեն նվազեցնում են փոշու հոսքը հանքավայրից դուրս:

Ջրի պահպանություն. ծրագրվում է Քաջարանի համայնքապետարանի հետ համատեղ կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրման իրականացումը: Հայտարարված տեղերի շրջանակներում արդեն ստացվել են գնառաչարկներ հավանական կապալառուներից: Մաքրման կայանը պետք է իրականացնի 50 լիտր վայրկյանում շրջապտույտով կոյուղաջրերի մաքրում: Կայանի շահագործման ժամկետը պարզ կլինի նախագծման և բյուջետավորման փուլերի ավարտից հետո: Ընկերությունը դիտարկում է նաև Արծվանիկի պոչամբարի ջրերի շրջանառու համակարգի և այլընտրանքային լուծումների ներդրման հնարավորությունը: 21.03.2024 Թ.



## Նշվեց պարսկական Ամանորը՝ Նովրուզը

Իրանի տոնացույցում ազգային ամենամեծ տոներից է Նովրուզը՝ Նոր տարին, որ նաև խորհրդանշում է գարնան գարթոնքը: Նովրուզը նաև կոչվում է պարսկական Ամանոր և նշվում է մի քանի իսլամական երկրներում՝ Իրան, Իրաք, Աֆղանստան, Պակիստան, Յեմեն և այլն: 2010 թվականին ՄԱԿ-ի գլխավոր ժողովը ճանաչել է Նովրուզի միջազգային օրը՝ որակելով այն որպես պարսկական ծագումով գարնանային փառատոն, որ նշվում է ավելի քան երեք հազար տարի:

Մարտի 20-ին Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսարանում տեղի ունեցավ օրվա խորհրդին պատշաճ հանդիսություն: Գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինը ներկայացրեց պարսկական Ամանորին առնչվող հետաքրքրական դրվագներ: Այնուհետև ցուցադրվեց տեսաֆիլմ, որից պարզ դարձավ, թե ինչպիսի ծեսերով, երգ ու ուրախությամբ են դիմավորում Նովրուզը վերոնշյալ երկրներում:

Նովրուզի առթիվ հյուպատոսարանի աշխատակիցներին և ողջ պարսիկ ժողովրդին բարեմտությամբ տրեղիս Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի պարտականությունները կատարող Վրեժ Բադալյանը, Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Աշոտ Խաչատրյանը, գործարար Վարոս Վեզիրյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակից Յասմին Ավետիսյանը, ով իր շնորհավորանքը հիշեցրեց պարսկերեն:

Երախտագիտություն հայտնելով հանդիսության մասնակիցներին՝ Մորթեզա Աբեդին Վարամինը՝ մատնանշեց այն ծրագրերը, որ պիտի իրականացվեն հյուպատոսարանի նախաձեռնությամբ, մասնավորապես, ճանապարհաշինության ոլորտում և Ազարակի մաքսակետում: Հանդիպում է կայացել մարզպետարանում իրանցի գործարարների մասնակցությամբ, Իրանի հյուպատոսությունը Կապանում բացվելուց հետո դեռ հարևան հանրապետությունից նման ներկայացուցչական պատվիրակություն չէր ժամանել Սյունիք՝ 16 ընկերությունների ղեկավարներից և ներկայացուցիչներից կազմված:

Բանախոսը նաև հայտնեց՝ ընթացիկ տարում մշակույթի և կրթության ոլորտներում ջանում են, որ դպրոցներում պարսկերենի ուսուցումն ընթացք ստանա:



րում ջանում են, որ դպրոցներում պարսկերենի ուսուցումն ընթացք ստանա:

«Միայն իմ այստեղից գնալուց հետո կզգացվի, թե ինչքան գործ է արվել», – այսպես եզրափակեց խոսքը գլխավոր հյուպատոսը:

Նովրուզին նվիրված հանդիսությունն ավարտվեց ավանդական հյուրասիրությամբ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ



## Իրանական Նոր տարին՝ Նովրուզը, Մեղրիում

Մարտի 25-ին «Մեղրու մարզաձևակության կենտրոն» ՀՊԱԿ-ի Մեղրիի մշակույթի տանը տեղի ունեցավ համերգ-միջոցառում՝ ԻԻՀ Կապանի հյուպատոսարանի և Մեղրու համայնքապետարանի համագործակցությամբ: Բարեկամ պետության գործընկերներն առաջին անգամ Մեղրիում նշեցին իրենց ազգային տոնը:

Ողջ երեկոյի ընթացքում հնչեցին իրանական երգ-երաժշտություն, հայկական երգերի պարսկերեն և Նորացված տարբերակներ, ինչպես նաև պոետ Յաֆեզի բանաստեղծությունները:

Մեծ հետաքրքրության արժանացան ԻԻՀ տարբեր նահանգների ազգային պարերը, որոնք իրենց մեջ լուրջորինակ խորհուրդ էին կրում:

Մեղրիի համայնքի ղեկավար Բագրատ Հաբարյանը շնորհավորական ուղերձ հղեց Կապանում ԻԻՀ գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինին և Նրա գործընկերներին:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեց «Յուսուֆ-հարավ» ավտոճանապարհի կառուցման վերջնական տեսահոլովակը (ծրագրի հովանավոր՝ ԻԻՀ «Թունեսի Սադդ Արիան» ճանապարհաշինարարական ընկերություն):

## Հարցազրույց ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն Լեռնիկ Պետրոսյանի հետ

Սկիզբը՝ էջ 3

Ինտերվյու Լեռնիկ Պետրոսյանի համալսարանը հանրապրոչունաբերության ոլորտի գծով աշխարհում 51-րդ հորիզոնականում է, դա շատ բարձր ցուցանիշ է: 2023 թ. ապրիլ ամսին երկու համալսարանի համատեղ պատվիրակությունն այցելեց Կապան և հանդիպեց մեզ հետ, ներկայացրին իրենց հաստատությունները, մենք էլ՝ մերը: Հրավեր ստացանք. պետք է աշխատե՞նք ձեր համալսարանում, ապրիլ ամսի երրորդ տասնամյակում հավանաբար կգնանք: Այդ պայմանավորվածությունը ձեռք ենք բերել, և արդեն հյուպատոսությունից մեզ հետ կպահ մեջ են: Նրանք առաջարկում են, մենք էլ կողմ ենք՝ փոխհամագործակցության հուշագիր ստորագրելու: Այդ համալսարանները փոքր չեն, տեխնոլոգիական համալսարանում, օրինակ, սովորում է մոտ 12 հազար ուսանող: Մենք ինչ ենք մտածում, այդտեղի հայ համայնքից շատ հնարավոր է ցանկացողներ լինեն, որ հենց հայերեն լեզվով ուսումը շարունակեն մեզ մոտ: Մեզ որոշակիորեն խանգարում է անգլերեն լեզվի ոչ բավարար իմացությունը և պարսկերենի չիմացությունը, որպեսզի կարողանանք փոխանակման ծրագրեր իրականացնել: Հգիտեմ՝ իրադարձություններն ինչպես կզարգանան, բայց մտածում ենք՝ այդ երկրների բուհերի հետ համագործակցել, մեզ առաջարկ եկավ Հնդկաստանի մի խոշոր բուհից ևս: Ցավով, պահանջվող չափանիշները որոշները չենք կարողանում բավարարել, մասնավորապես պետք է անգլերենին շատ լավ տիրապետել:

– Անդրադառնա՞նք հիմնախնդիրներից մի քանիսին և առավել կարևոր ծրագրերին:

– Գլխավոր խնդիրն արդեն երեսնամյա պատմություն ունեցող մասնաճյուղի պահպանումն է: Ժամանակին ստեղծվել են երևանի պոլիտեխնիկական համալսարանի Կապանի և Գորիսի կրթահամալիրներ, հետագայում Գորիսը դարձավ առանձին համալսարան, Կապանը մնաց մասնաճյուղի կարգավիճակով: Այդ կարգավիճակը բավականին օգտակար է մեզ համար, որովհետև նախ՝ այս տարածաշրջանում արդյունաբերական ընկերությունները շատ են, և տեխնոլոգիական, ճարտարագիտական մեծ բուհի կազմում լինելն առավելություններ է տալիս: Ժամանակի ընթացքում ընդգրկվել ենք մի քանի ծրագրում: Այդ ամենի շնորհիվ այստեղ լաբորատորիաներ են ստեղծվել, մի մասը՝ մեր և հովանավորների միջոցով, մի մասն էլ, օրինակ, ճարտարագիտական լաբորատորիան՝ ՀԱՊՀ-ի հետ համատեղ ծրագրի շրջանակում, որտեղ նաև ցուցադրվում են մոդելներ, կատարվում են գիտահետազոտական աշխատանքներ: Նաև հիբրիդային լաբորատորիա մեզ մոտ հիմնադրվեց, այդ ծրագիրը արտասահմանյան համալսարանների հետ էր... Հատերն ուզում են ինքնուրույն լինել, բայց եթե դու կարողանում ես օգտվել մայր բուհի հնարավորությունից, ապա դա նախընտրելի է: Առաջիկա մեկ տարվա մեջ կկազմակերպվեն գիտաժողով, որտեղ բավականին լուրջ հարցադրումներ կլինեն... 2013 թ. այդպիսի մի գիտաժողով կազմակերպել ենք, որին ներկա էին երեք անգլոսոցիալ, 15 դոկտոր-պրոֆեսոր, այդ թվում՝ մեր համալսարանից ու տարածաշրջանային բուհերից, նույնիսկ Արցախի համալսարանից:

– Հնարավոր չէ, բնականաբար, հասնել նրան, որ դասախոսական անձնակազմում բոլորը լինեն գիտական կոչումներով, աստիճաններով: Դրա համար աշխարհում ընդունված է հեռավար դասավանդումը: Կարողանա՞նք եք օգտվել այդ գործելակերպից:

– Այդ ուղղությամբ պետք է աշխատենք... Եթե համաշխարհային մակարդակի գիտնականների մասով ենք ուզում խոսել, ապա լեզվի խնդիր է առաջ գալիս: Բայց նաև մեր մայր բուհում կան փորձառու դասախոսներ, ովքեր հեռավար ձևով դասընթացներ են վարում: Մենք խնդիր ունենք, օրինակ, ՏՏ ոլորտում... Ժամեր կան, բայց այդքան մասնագետներ չկան: Երևի ամռանը պետք է փորձեմ ուսման պրոցեսում ընդգրկել երևանում բնակվող՝ կապանյան ծագումով երիտասարդների, ովքեր ՏՏ ոլորտում ճանաչում ունեցող մասնագետներ են: Կիրառելի նրանց ներառել այդ բնագավառի դասընթացներին, և ոչ միայն հեռավար: Նախկինում այսպիսի ավանդույթ կար՝ խտացված կարգով գալիս էին մասնագետներ և դասախոսություններ իրականացնում: Գուցե և այդ փորձը վերականգնենք...

– Հիմնախնդիրների մասին ենք խոսում, բայց թիվ մեկ հիմնախնդիրը ոչ միայն ձեր բուհում, այլև ամբողջ Հայաստանում կոնսոլիդացնելն է: Վիճակագրական տվյալներ փաստում են, որ անգամ պետական պատվերով սահմանված տեղերը չեն համալրվում: Պատճառները, իհարկե, խորն են՝ ժողովրդագրություն, սոցիալական... Որքան տեղյակ ենք, Դուք այդ խնդիրը լուծելու համար ուզում եք ավագ դպրոց հիմնել մասնաճյուղին կից, արդյո՞ք դա կբերի նշված խնդրի գոնե մասնակի լուծմանը: Ի՞նչ չի կարողանում լուծել այսօրվա հանրակրթական դպրոցը, որ Դուք կցանկանայիք ձեր ավագ դպրոցում լուծել:

– Շատ կարևոր հարց է տալիս. վերջին տասնամյակում բավականին լուրջ խնդիր է դարձել դպրոցները, հատկապես բնագիտական թեև որակյալ մանկավարժական կադրերով ապահովելը: Պաշտոնական տվյալ եմ ասում՝ Սյունիքի և Հիրակի մարզերի դպրոցներում դասավանդող ֆիզիկայի ուսուցիչների 54-55 տոկոսը թըշաղկ անցած մասնագետներ են: Ծանր վիճակ է նաև այլ առարկաների գծով: Այսօր, օրինակ, մեր դասախոսներից ոմանք նաև դպրոցում են դասավանդում մաթեմատիկա, ինֆորմատիկա, այսինքն այդ մասնագետների կարիքը շատ է զգացվում:


Ինչո՞ւ չեն դիմում տեխնիկական բուհ կամ ճարտարագիտական բուհ: Խնդիրը հետևյալն է՝ երեխաները պետք է տան համապատասխան առարկաների քննություն, պետք է հանձնեն մաթեմատիկա, շատ դեպքերում՝ ֆիզիկա, առանձին դեպքերում կամ կամի տարբերակն է: Եվ ուրեմն՝ այդ







# Մահացել է բանաստեղծ Ապետոնակ Գրիգորյանը



Կյանքի 89-րդ տարում երկրային կյանքին հրաժեշտ տվեց հարգված մարդ, մանկավարժ, Հայաստանի գրողների միության պատվավոր անդամ, բանաստեղծ Ապետոնակ Գրիգորյանը: Նրա ինքնահատուկ պոեզիան կապահի նրա հիշատակն ու անունը բոլոր ժամանակներում: ՀԳՄ Այոնիքի բաժանմունքի անուկից ցավակցում ենք ընտանիքի անդամներին:

\* \* \*

Ծնվել է 1935 թ. փետրվարի 14-ին Այոնիքի մարզի Գորիս քաղաքում՝ Տեղ գյուղից Գորիսում բնակություն հաստատած Արշակ և Վարդանուշ Գրիգորյանների ընտանիքում (Գյարուն Արշակ Բաղդուց Նշանավոր տոհմից):

1943-1944 ուստարում ընդունվել է Գորիսի 7-ամյա դպրոցը: Ավարտելուց հետո ուսումը շարունակել է Գորիսի N 2, ապա՝ N 1 միջնակարգ դպրոցում: 1955-56 ուստարում ավարտել է Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցը: 1957-1960 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1962 թ. վերադարձել է հայրենիք և աշխատանքի անցել Տաթևի կի շինարարությունում նախ որպես ձևավորող նկարիչ, ապա շինմոնտաժային տեղամասում՝ մոնտաժող փականագործ Ակներ-Շինուհայր-Խազալկապ ջրատար գծի վրա: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության հեռուստա բաժինը: 1966 թ. գործուղվել է Գորիսի շրջանի Հայիձոր գյուղ՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ՝ մինչև 1969 թ.:

Համալսարանն ավարտելուց հետո՝ 1970-2005 թթ., աշխատել է Գորիսի N 3 միջնակարգ դպրոցում: Գրել սկսել է մանկուց, ասել է թե՛ դպրոցական տարիներից: Սուղ ժամանակը և գավառական կյանքը խլել են նրա մտքի շողարձակումները: Բայց և այնպես գտել է իրեն, ստեղծել իր գեղարվեստական աշխարհը՝ կայունացնելով ասելու ձևի իր հարթթականը, հարազատ մնալով չափածո խոսքի դասական ձևերին:

«Դասական ձևերով պիտի բերես բո նորոյթը», – ասում էր հեղինակը:

Տպագրվել է հանրապետական «Գրական թերթում», «Չանգեզուրում», «Այոնիք» մարզային պարբերականում, «Այոնյաց աշխարհ», «Բանբեր Գորիսի», «Այոնյաց երկիր», «Գրական Այոնիք» և «Համայնք» պարբերականներում ու «Ստեղծագործում է Գորիսը» հավաքածուում, «Գորիսապատումի» առաջին հատորում:

## ՄԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՊԵՏԸ



### ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հիսուն տարուց ավելի է, ինչ Ապետոնակ Գրիգորյանին գորիսցիները «Բանաստեղծ Ապետը» անվամբ են կրթել: Բանաստեղծ բառը Գորիսում չափածո խոսք ասելու մոլուցքով տառապող այլ մարդկանց անունների էլ են երբեմն կցում: Եվ դա տեղի է ունենում հատկապես այն ժամանակ, երբ ինչ-որ մեկն իր պատմությունն անելիս, ցանկանում է գրուցակցին ճանաչեցնել, թե խոսքը մեր քաղաքում նույն անունն ունեցող մարդկանցից որ մեկի մասին է: Բայց նման դեպքերում գորիսցիները բանաստեղծ բառը տվյալ անձնավորության անվան կողքին հնչեցնում են հիմնականում հետևյալ ձևակերպմամբ՝ Էն սուտ բանաստեղծը:

Տասնամյակներ ի վեր Գորիսի բնակիչների պատկերացումներում Ապետոնակ Գրիգորյանն է եղել իսկական բանաստեղծի կերպար մարմնավորող Էտայրն-անիատը:

Գորիսում չի գտնվի մի մարդ, ով նրա մի տողանի, մեջտեղից ծալած տետրը տեսած չլինի: Ողջ կյանքում նույնիսկ իր այդ սովորությանը նա մնաց հավատարիմ. միշտ մի տողանի, բարակ տետրերի էջերի վրա գրառեց չափածո խոսք դարձրած իր նվիրական ապրումները:

Գորիս քաղաքի կենտրոնական մասի մայթերին դժվար թե գտնվի մի հատված, որտեղ երբևէ Ապետոնակ Գրիգորյանը հանրահայտ իր տետրը ձեռքին՝ կանգնած չլինի և, ստեղծագործական արարումով արբեցած ինքնամոռաց տարերքի մեջ, իր սրտին մոտ մարդկանց համար բանաստեղծություններն ընթերցած չլինի: Համոզված եմ, որ այդպիսի դրվագներից

գրեմ մեկը Գորիսում ապրողների ենթագիտակցական խորքերում, անկասկած, դրոշմվել է:

Նա միայն կյանքի ութերորդ տասնամյակը թեակրիսելուց հետո, ձեռագրերն ի մի բերելով, սկսեց լրջորեն մտածել գիրք տպագրելու մասին և 2013 թվականին վերջապես հրատարակեց «Անթեղած կրակներ» վերնագիրը կրող իր բանաստեղծությունների ժողովածուն:

Համարյա նույն ծավալի գիրք կարող էր հրատարակել և խորհրդային տարիներին: Բայց խորհրդային իդեալականացված համակարգում նա գիրք տպագրելու փորձ չարեց: Իսկ եթե նույնիսկ աներ՝ մեկ է՝ հրատարակչությունների գործունեությունը վերահսկող, այդ ժամանակաշրջանի գրական իրողություններն «արժևորելու» իրավասություններն իրենց վրա վերցրած, պետության կերակրամաններին մոտ կանգնած գրաքննիչ այրերը հաստատ կձախողեին Ապետոնակ Գրիգորյանի՝ գիրք տպագրելու նախաձեռնությունը, բանի որ այդ տարիներին բանաստեղծությունների վերածված նրա ինքնաճանաչողական խոստովանություններն ու բնարական մենախոսություններն անգամ ներծծված էին խորհրդային սղաված իրականությունը մերժող անհատի քաղաքացիական անհնազանդությամբ:

Անարարողության հետ չհամակերպվելու, ճշմարտությունը բարձրաձայնելու, անարժեքությունն արհամարհելու առնական մարդկային որակներն ամբողջ կյանքում նրա ուղեկիցները եղան:

Եթե մարդն իր ժամանակի ազնիվ, ես կասեի՝ աստվածահաճո քաղաքացին չէ, ապա այդպիսի մարդուն ոչ միայն բանաստեղծություն, այլև նույնիսկ ոտանավորներ գրելու իրավունքից էլ պետք է զրկել:

Համամարդկային արժեքների հավատարիմ քաղաքացիականությունը մշտապես եղել է Ապետոնակ Գրիգորյանի առօրեական կյանքի իմաստավորող, նրա կեցության ուղղորդող անկողնայտելի բաղադրիչը: Նա իր ստեղծագործություններում հաճախակի անդրադարձավ հանրային կյանքն այլասերող, մեր ազգային գոյությանն ու դիմագծին սպառնացող հոռի իրողություններին:

Անցյալ դարի 90-ականների դժոխակ տարիներին գոյատևող մեր ժողովրդի հուզաշխարհի ներքին պոռթկումներին

ունկնդիր՝ Ապետոնակ Գրիգորյանը բանահրանքով ու սարկազմով լի պատկերավոր բանաստեղծական խոսքի հեղեղումներով ստեղծեց քաղաքացիական պոեզիայի ուշագրավ նմուշներ՝ իր խառնվածքին բնորոշ կատաղի խռովքով փնտելով հասարակության մեջ նյութականով միայն իրենց արժևորել փորձող, հոգևորից զուրկ, ինքնաբավ մարդկանց սնամեջ գոյությունը («Կարմիր մերսեդես», «Պատեհապաշտներին»):

Հատկանշականն այն է, որ խորհրդային իրավակարգից շուկայական հարաբերությունների անցման փուլում Ապետոնակ Գրիգորյանի ներաշխարհը փոթորկած հենց այդպիսի՝ իրենց պետական այրեր հռչակած մարդկանց անբարո վարքագիծն ու ընչաբացարկությունն ի վերջո ձևավորեցին լողված արժեհամակարգերով այն տխուր իրականությունը, որի մեջ հայտնվեցինք ազգովի...

Ի ծնե ամեն մի ճշմարիտ բանաստեղծի խառնվածք այս կամ այն չափով պարուրված է լինում դոկտրինայությամբ. ասել է թե՛ իսկական բանաստեղծները մարդկային արժանապատվությունը, վեհանձնությունը, արդարամտությունը, ցնորական երազայինն ու վսեմն իրենց ներաշխարհում խիզախորեն կրելու և այդ արժեքներով մոլեռանդորեն ամբողջ կյանքում ապրելու ասպետական տոկոսությամբ են օժտված լինում:

Թե՛ իր գոյությանն ուղեկից դարձրած վերոհիշյալ առաքնություններով, թե՛ իր անուրջներով սնվելու կարողությամբ, թե՛ իր դավանած սկզբունքներից չչեղվելու համառությամբ և թե՛ իր արտաքին տեսքով Ապետոնակ Գրիգորյանն այնքան է Մերվանտեսի կերտած խորհրդավոր կերպարին հիշեցնում, որ նրան, առանց վարանելու, կարելի է իրական կյանքում ապրող Դոն Կիխոտի մերօրյա կրկնօրինակ համարել:

Եթե հաշվի առնվի նրա ծննդյան թվականը (1935), ապա ըստ մեզանում ընդունված ավանդույթի՝ նրան անցյալ դարի 50-ականների սերնդի ներկայացուցիչ պիտի համարել: Բայց Ապետոնակ Գրիգորյանը մեր քաղաքում կարողացավ քայլել թե՛ 60-ականները, թե՛ 70-ականները ներկայացնող սերունդների հետ նաև ու, սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նա իր ներաշխարհը խարսխեց 70-ականները խորհրդանշող իմ սերնդակից ստեղծագործողների մտերմիկ միջավայրում: Եվ դա պայմանավորված էր երևի թե այն իրողությամբ, որ նա իրեն մեր ընկերական միջավայրում ավելի ընկալված զգաց:

Բնավորությամբ լինելով մարդամոտ՝ նա, առանց խարականության, հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ նստեց ու նրանց հետ խորհրդածեց, իրեն հատուկ զավեշտալի երանգավորումներով ճեպակարված խոսքի համ ու հոտով նրանց հետ գրուցի բռնվեց, եթե պետք էր՝ լսեց, եթե պետք էր՝ վիճեց, իր որդեգրած արժեհամակարգի պաշտպանության համար հոգևորը քամահորդ, տիաս ու նեղմիտ մարդկանց հետ երբեմն անգամ, բառիս բուն իմաստով, ձեռնամարտի մեջ մտավ, բայց կարողացավ, այդ ամենի հետ մեկտեղ, ողջ կյանքում ոգեղեն ոլորտներում ճախրող իր եղության հետ ներանձնացած ապրել:

Ապետոնակ Գրիգորյանի ստեղծագործական աշխարհում կան խորապես ապրված քնարական գործեր («Ես ինձ տեսել եմ», «Վերհուշ», «Էլ չթուլվեք», «Հառաչանք», «Հուշանվագ...»): Նա պոեզիա բերեց իր եղության հոգեկաններով ու հորդաբով հուզաշխարհով շարախված, ասելիքին համահունչ պատկերավոր մտածողության ինքնատիպ մի համակարգ, որի հախտուն գեղարվեստական դրսևորումները չեն կարող որևէ մեկի ստեղծագործական աշխարհի մեջ գտնել:

Առաջնորդվելով հիմնականում դասական պոեզիայի ավանդույթներով՝ անցյալի ոչ մի բանաստեղծի չնմանակելով, ոչ մեկից խոհ ու պատկեր չմուրալով, Ապետոնակ Գրիգորյանն արարեց իր բանաստեղծական աշխարհը՝ ոչ մեկին չկրկնելով: Թե՛ կրկնելու թուլությամբ ինքն էլ, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ վարակվեց, ապա կրկնեց ինքն իրեն միայն...



Գևորգ Պարոնյանի որդու՝ Վահե Պարոնյանի ընտանիքը

# Գևորգ Պարոնյան. արվեստագետը, ուսուցիչը, մարդը...

## Սկիզբը՝ էջ 5

ինքնատիպ ոճի ու թափանցիկության: Գևորգ Պարոնյանը հանրության լայն խավերին հայտնի գեղանկարիչ էր, երբ սկսեց զբաղվել նաև մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակությամբ և կրթությամբ՝ Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցում դասավանդելով գծագրություն և նկարչություն, զուգահեռ հիմնադիրը լինելով քաղաքի մանկապատանեկան գեղագիտական դպրոցի:

Այդ ընթացքում տասնյակ հարյուրավոր, գուցե՝ հազարավոր երեխաներ են գեղագիտական կրթություն ստացել նրա ձեռամբ, անցել պարոնյանական դպրոցով, հետագայում դարձել ճարտարապետներ, գեղանկարիչներ, պարզապես՝ արվեստասեր, լավ ու բարի մարդիկ:

Գեղանկարիչը մեր տան հարևանությամբ ապրելուց գատ՝ նաև եղել է իմ ուսուցիչը՝ գծագրություն և նկարչություն դասավանդելով: Անմոռանալի դասեր էին: Յուրաքանչյուր մուտք դասարան՝ մեզ համար գույների ու գծերի, մարդկային հմայքի ու համեստության, անսպառ համբերության ու ընկալման անկրկնելի տոներ էին:

Չետագայում, երբ արդեն լրագրող էի, մեկ անգամ չէ, որ առիթ ունեցա գեղանկարչի հետ զրուցելու՝ իր արվեստի ու մտորումների, ժամանակակից ու անտիկ գեղանկարչության, հարափոփոխ ժամանակի ու նրանում վերջիններիս անելիքի, ազգային ու մոդեռնիստական արվեստում հայի տեսանկյան պահպանման, 20-րդ դարում հայ մեծ գեղանկարիչների, բազմաթիվ այլ թեմաներով, չմոռանալով անդրադառնալ փոխված արժեքներին ու հասարակարգին, որանցում արվեստագետի խնդիրներին...

90-ականների սկզբին գեղանկարչի տանն էի, արվեստանոցում, ինքն էր զանգահարել իր մասին տպագրված մի կյուբի հետքերով ու հրավիրել տեսնելու իր նոր կտավները:

Գեղանկարչության մասին խոսելիս, թե իրեն ո՞ր ժանրի նկարիչ կհամարեր, գեղանկարիչն ասաց՝ «Նկարչությունը նախ և առաջ գծերի ու պատկերի հարմոնիան է, եթե նրանց դասավորությունը մտքում չտեսնես, չես կարող նկարել, գույները, չափն ու խորքը, տարածականն ու իրականությունը կխառնվեն, ասելիքդ տեղ չի հասնի»:

Մարդ կա՞ գծագրություն չգիտի, բայց գծերը զգում է, դա էլ է շնորհք, այդպիսի ասներ էլ են ունեցել, որոնց մի մասը հետագայում տուրք է տվել արեստրակտի ժանրին:

Կարելի է, բայց դա իմը չէ, ես սիրում եմ հստակության ու նրա տակ թաքցնելով խորհրդավորության միջինը, ինչպես կուզեք անվանեք, բայց ոչ՝ սյուրռեալիզմ, կուբիզմ կամ ֆուտուրիզմ, կամ թե՛ մոդեռնիզմ...

Ես այդ իզմերի մեջ չեմ ուզում խորանալ, ես ինձ համարում եմ ամենատվորական իմաստով մի նկարիչ, ով պարզապես օգտվում է գույնի, գծանկարի, կոմպոզիցիայի, ռիթմի, լույսի և ստվերի, հողի և օդի ընձեռած



Արամ Մաշտոյան

հնարավորություններից և այդ հարթության վրա վերակենդանացնում իրականությունը, ծավալի ու տարածության պատրանք ստեղծում, հոգեբանական ու շարժման վիճակ:

Չիմա դուք ասեք, թե ի՞նչ ժանրի նկարիչ եմ»:

Իսկ ես միայն մի բան կարող էի ասել՝ Գևորգ Պարոնյան գեղանկարիչն աներևակայելի համեստ անձնավորություն և արվեստագետ էր:

\*\*\*

Գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի ցուցասրահում ցուցադրված նրա կտավները՝ ծաղիկներ, Նատյուրմորտներ, բնանկարներ, պատմաազգագրական աշխատանքներ՝ իրենց բարձր տեխնիկայով և գեղանկարչական որակով, գույնի կիրառման որբան պարզ, նույնպես լիրիկական հնարքով, բնության կենդանի շնչով ու զգացողությամբ, մարդկային ոգու ջերմությամբ այսօր էլ հմայում են արվեստասեր հասարակությանը, լեռնաշխարհի մարդկանց:

Ինչպես Գուրոս-հայր գեղանկարչի, այնպես էլ որդի գեղանկարչի արվեստն այսօր ու

զալիքում մեծ դպրոց կարող են լինել ստեղծագործող սերունդների համար:

Երկուսն էլ աշխարհի բերեցին այն, ինչն անկրկնելի ու մնայուն արժեքներ են՝ ծննդավայրի վճիտ անդրադարձը, պարոնյանական թափանցիկ և տաք գույները:

Գեղանկարիչը խոհական ու պարզ գույներով ստեղծել է շատ կտավներ՝ անմահության վավերագրեր տալով հայրենի բնության, նրա մարդկանց ու կենցաղի, ծառ ու ծաղկի պատկերներին:

1975-85 թթ. հանրապետական և միութենական ցուցահանդեսներին նկարչի աշխատանքներն արվեստասեր հասարակության կողմից ընդունվեցին սիրով ու ջերմությամբ, բակունցյան աշխարհը նորովի հետաքրքրեց արվեստասերներին, հանրապետական թերթերում Գևորգ Պարոնյանի արվեստը համարվեց սիրելի և ընկալելի հասարակայնության բոլոր շերտերի համար՝ իր նուրբ ճաշակի, գեղարվեստական միջոցներին կատարելապես տիրապետելու, բնության գույների բացառիկ զգացողության շնորհիվ:

Նա այլևս դպրոց, պարոնյանական հաստատված ոճ և ուղղություն էր հայ գեղանկարչության մեջ, ինչը հետագայում որդեգրեցին նրա տաղանդավոր սաները, շատ ու շատ հայ նկարիչներ՝ գնալով նկարչի բացած նոր՝

Նարնջագույն, կանաչ գույների հետ: Չայր ու որդի գեղանկարիչների արվեստը որբան տարբեր, նույնպես՝ ինքնատիպ ու հարմոնիկ, մեկ՝ միախառնվելով, մեկ՝ իրարից անջատ, երկու հզոր գետ, շուրջ հարյուր ու ավելի տարի է, ինչ՝ սկիզբ առած Գորիսից, հոսում են Սյունյաց լեռներով, տարածվում Չայաստան աշխարհով, ոռոգում հայկական արվեստի հունդերը՝ իրենց նույնպես գեղեցիկ նորանոր վտակներով, իրարից ուժ ու հմայք առած, զորեղացած, ինչը շարունակվում է մինչև այսօր, կշարունակվի նաև հեռուներ ձգվող զալիքում...

Վատահաբար կարելի է ասել՝ հայ կերպարվեստը մի կարևոր երանգով հարստացավ, որը, ամրապնդելով իր դերն ու ոճը, նոր լույսով բացահայտեց հայկական լեռնաշխարհի գեղեցկությունները, հայ իրականությունը, հայի ոգու հայրենասիրական զգացումները՝ սերունդների մեջ ձևավորելով դպրոց, որի ակունքը եղել ու մնում է պարոնյանական հզոր ու գունագեղ գետը...

## Գևորգ Պարոնյանի մտքերից՝ մեր առանձին գրույցներում

Կարևորը՝ իմ հողն ու ջուրն է, նկարիչը պիտի ստեղծագործի միայն իր հայրենիքում, իր երկնքի տակ, եթե ուզում է մնալու և ազգային գործ ստեղծել: Եթե Աստված առաքելություն է դրել թո ուսերին, պարտավոր ես այն պատվով տանել մինչև վերջ, պարտք չմասն ոչ երկրիդ, ոչ երկնքին:

Մարտիրոս Սարյանն ասում էր՝ «Մարդն ինքը բնությունն է, բնությունը՝ մարդը: Մահ չկա: Մահը պրոցես է լույ անվերջության ճանապարհին»:

Սա ինձ սփոփում է, որ վերջը դեռ վերջը չէ: Ի՞նչ է ինձ համար իմ գեղանկարը: Ամեն ինչ է, դժվար է նրանից բաժանվել: Ասես զրկվում ես թո բաժին օդից, լույսից, հողից ու գույներից, նա գնում է մեկ ուրիշ տուն՝ ջերմացնելու:

Ովքե՞ր կլինեն այդ տան բնակիչները, ինչպիսի՞ ճակատագիր կունենա. սա է ցավը, որ գեղանկարիչն ապրում է, որբան էլ թանկ գնով այն վաճառվի:

Նկարել եմ հայրենի բնաշխարհի բնապատկերներ, սարեր, վանքեր, տներ, ծառեր, ծաղիկներ ու մրգեր, այն, ինչ կա բնության մեջ, այն, ինչ տեսել ու զգացել եմ հոգով, նաև՝ դիմանկարներ...

Բայց էի թվում է՝ քիչ եմ կարողացել արտահայտել ինձ:

Նկարիչն այդպես է, նա վերջին շնչում էլ լինի՝ դեռ շատ ասելիք կունենա:

Գորիսը, Չանգեզուրն առհասարակ, չնաշխարհիկ վայր է, այն դրախտ է յուրաքանչյուր արվեստագետի համար և միշտ կարող է ոգեշնչման աղբյուր լինել յուրաքանչյուր մարդու համար:

Չեմ կարող արդարացնել կամ հասկանալ մեր լեռնաշխարհի այն նկարչին, որ թողնում, հեռանում է այստեղից, գնում հեռուներ՝ իբր իր արվեստը շարունակելու:

Ամեն ինչի սկիզբը, ընթացքը և շարունակությունն իմ հայրենիքն է, ծննդավայրս:

Ինձ ոգեշնչում են մեր լեռնաշխարհի մարդիկ, նրանց կենցաղը, աշխարհն իր խորհրդավոր կողմերով ու ամեն անգամ՝ նոր բացահայտումներով:

Ինչպե՞ս եմ նկարում. իմ կյուբը պարզ է և հասարակ, ուստի ես էլ եմ ձգտում լինել նույնը՝ խորքում ունենալով վառ և արտահայտիչ զգացումներ:

Սա մեր հայկականության և ազգային արվեստի անբաժանելի տարրն է:

Նույնիսկ երկրաչափական ձևին, որով որջ տիեզերքն է կառուցված, հուզական լիցք եմ հաղորդում, առանց որի նա շատ տխուր կլիներ:

Բնությունը հավերժ է, նկարիչը պետք է դա արտացոլի իր բնականաբար, որպեսզի չկորցնի իր և հավերժի կապը, հնար տա, որ դիտողն էլ այն տեսնի ու զգա այդ կապը:

Նկարելիս՝ անընդհատ նոր հարցադրումներ են ծնվում, մտքի ու զգացմունքի հակադրություններ են առաջանում, հաճախ նրանց լուծումներն ինձ համար էլ անսովոր բացահայտումներ են դառնում՝ արվեստի գաղտնիքների ու աշխարհի:

Այսպես է ծնվում մեծ արվեստն ու գնում դեպի համաշխարհային օվկիանոս, և արդեն նկարչով է պայմանավորված՝ ինքը կլինի՞ նրա զարկերակներից մեկը...

**ՍՈՒԿԱՆԱ ԲԱՐԱՏԱՆՅԱՆ  
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՄԱՐԻԱՍ  
ԼԱԶԱՐՅԱՆԻ**

# Ավետիք Իսահակյանը՝ 104 տարի առաջ՝ մարտի 23-26-ը, Շուշիում՝ անգլիացիների քաջալերանքով, ադրբեջանցիների կազմակերպած հայերի կոտորածի մասին



### Սկզբը՝ էջ 1

«Մտանք քաղաք. Խորհրդային Ադրբեջանը դուրբան-բայրամի տուն էր կատարում. երաժշտություն, քեֆ, թուրք ամբոխ: Շուշում հայ չէր մնացել. մի տեղից մյուս տեղ փոխադրվող հայեր կային... Բաբվից գալիս էին գյուղ՝ ասելով, որ ապրելու հնարավորություն չկա, ինչ որ ունեցիք-չունեցիք՝ բոլորը ձեռքերիցս իլել են, և գյուղերից գնում են Բագու, ասելով՝ գյուղում ապրելու միջոց չկա. էլի այնտեղ մշակություն կանենք և գյուղիցս կապահենք: Ո՞վ էր հասկանում իր արածը...»

Որ ասեմ ավերակները լեզու են ունենում խոսելու և խոսացնելու, լալու և լացեցնելու՝ չեք հավատա: Ի՞նչն էր հապա ինձ այնքան խոսացնում, եթե ոչ իմ պարտեզի խանձված ու կիսաքանդ ծառերը, ջարդ ու փշուր վարդենիները, բակում այլուրի նման մաղված ու կրակից հալված ապակիները, անոթների ու ամանների փշրանքները...

Մեր նկուղը քարակոյտերով է լցված, որոնց տակ հավատացած էի, թե կգտնեմ իմ պահ տված հարստության արկղը-շորեր, արծաթեղեղեններ, ձեռագրեր... փորեցի՞նք, փորեցի՞նք մարդ ու կին, երկու հոգով և ոչինչ չգտանք: Ո՞չ մի նշան, ոչ մի հետք: Լուռ հոգոց միայն արձակեցի՞նք ու ետ դարձանք մեր աշխատանքից ձեռնու՞նայն, ցեխի ու քրտինքի մեջ կորած: Աշնանային ցողերից բարձրացած կանաչ խոտի վրա փռեցի՞նք մեր կտավե խուրջիկը, հանեցի՞նք մեր պաշար գարի հացն ու սոխը, մի-մի քար դրեցի՞նք մեր տակը և վերջին անգամ մեր պարտեզում հաց ուտելով՝ վեր կացանք, համբուրեցի՞նք մեր տան պատերը, մեր դրած քարերը, մեր ձեռքի դիպած վայրերը և լուռ ու անխոս, լցված սրտով և խեղդված կոկորդով հրաժեշտ տվի՞նք անձայն լացող ավերակներին և հեռացանք... մեր ոտները չէին շարժվում, մեր սիրտը չէր հեռանում... կրկին դարձանք, կրկին համբուրեցի՞նք և այս անգամ ոչ թե հեռացանք, այլ գծվածի պես վազեցի՞նք, որ կարողանանք հաղթած լինել մեր ոտքերի կապանքների, մեր վշտին, իսկ նրանք դեռ լալիս էին մեր ետևից, դեռ կանչում էին մեզ...

Անցանք... ավերակներ, ավերակներ, սարսափ ազդող ամայություն. մարդկային գանգեր, մորթազերծ ոսկրոտիք և մեր փախուստը... Բողոքում էին կարծես դրանք մարդկային զազանության զոհ գնացած ո՞վ

գիտի քանի մեզ ծանոթ ու բարեկամ, հարագատ ու ազգական անձնավորությունների այդ դիակների ոսկորները, որոնց չէինք մոտենում, չէինք խոսեցնում, այլ խորշում էինք, իբրև ժանտախտից, ու փախչում էինք երեսներս ծածկած...

«Անցանք սոսկումների շարքը: Քանի՞ հատ էին նրանք, քանի՞ բաժանումներ, քանի՞ վարչություն, քանի՞ դիվան. թիվ ու համար չկար: Մեր դիմումների նպատակն էր, որ թույլ տային մեր տան ավերակներում պատերի ծայրերին մնացած թիթեղներից մի 50

հատ գյուղը տանելու՝ այնտեղ մեր հայրական ավերակ սենյակներից մեկի գլուխը ծածկելու և մեջը պատսպարվելու: Մեկը խոստացավ... մյուսը թե՛ քաղաքը պիտի վերաշինենք, երրորդը՝ չէ՛, ասաց, պատերազմական ավար է, թույլ չենք տա տանելու:

Եվ այսպես՝ ձեռնու՞նայն: Մեր թափառումների յուրաքանչյուր քայլափոխում մեզ հանդիպում էին հայ աղջիկներ՝

ժառանգություն մնացած թուրքերին՝ քաղաքի կործանումից և հայերի գերությունից: Մենք լսել էինք, բայց չէինք տեսել նրանց՝ թուրքի կին դարձած: Որն իր հագուստում, որը թրքական չադրայի մեջ, հինայած... մեր հարևանի աղջկան պատահեցի՞նք՝ դռան ճեղքից դեպի փողոց նայելիս: Կինս մոտեցավ, կանչեց անունը: Նա կնոջս բարևն ընդունեց սառնասրտությամբ:

- Շա՛տ կան ձեզանից այստեղ,- հարցրեց կինս:  
- Շատ:  
- Ովքե՛ր են, ասա՛, մեր թաղից մնացածները:  
- Չեմ կարող... չեմ տեսել: Վերքերս մի քրքրեք, կոտորվե՛ն ձեզ պես հայերը,- ասաց նա թախծությամբ և դուռը երեսներին պինդ շրխկացրեց»:

Ահա այսպես, և հայ բոլշևիկները, թուրքերի բարեկամներն ու ընկերները չուզեցին գերությունից ազատել հայ աղջիկներին, նրանք ուզում էին հնդիկների և անգլիացիների ձեռքից:

Իսկ թուրքերը՝ կեղծավոր, խորամանկ, դիպված, նե՛նգ, ստախոս՝ իրենց մոռոզական ցեղային այս հատկությունով զինված:

Մի դարաբաղի ծեր հայ ասել է Ադրբեջանցի պետության առաջ գալու նկատմամբ. «Օսմանցի և անգլիացի (Օսմանցի և Անգլիան) բռնաբերեցին և ցկնեցին Ադրբեջանի պետությանը:

Խեղճ հայ ժողովուրդ՝ անտեր, անպաշտպան»:

...Ազգամիջյան կոիվների ժամանակ ադրբեջանցի ազգայնամուլները գիշերային հանկարծական հարձակում գործեցին հայոց վրա և կրակ տվին: Այդ գիշերը ուժեղ բամի էր: Քամին տարածեց իրոզեղ, չոր թախթափուշերը հեշտությամբ վառվեցին, և ամբողջ քաղաքը իրո ճարակ դարձավ... Այսպես դատարկվեց Շուշին ու մեռավ... Դարաբաղից, ինչպես հայտնի է, լավ կոմպոզիցիոն են եղել միշտ, և այդ օրն էլ կարող էին դիմադրել, բայց, ինչպես ասացի, հարձակումը բոլորովին հանկարծական եղավ, և հայերն էլ ոչ մի պատրաստություն չունեցին:

«ԱՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ», № 4



**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (26,5 դասաժամ) և «Երաժշտություն» (6 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև գինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության

դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համարել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի մարտի 21-ից մինչև 2024 թվականի ապրիլի 03-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Մրցույթը տեղի կունենա 2024թ. ապրիլի 04-ին՝ ժամը 15:00-ին, Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոցում, հասցե՝ ք. Կապան, Կավարտ թաղամաս 124: Տեղեկությունների համար զանգահարել (0285) 2-46-37 հեռախոսահամարով:

**Սյունյաց երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՐՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

**Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Երկրորդ ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՐՎԱԾԴ՝ ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկիրին» պարտադիր է: Թե՛ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐՈՒՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 27.03.2024թ.: